

րով մեծ հոշակ հանած է հոն, մանաւանդ իր քաղցր ու ներդաշնակ ձայնով և շարականադիտութեամբ:

Իր նուիրակութեան առաջին շրջանին Գէորգ Մեծագործ կաթուղիկոսը շատ գնահատած ու սիրած է զինքը, և եպիսկոպոս ձեռնադրած, Վերջին կաթուղիկոսական ընտրութեան առթիւ, 4 ընտրելիներէն երրորդն եղած էր: Իր ամբողջ հարստութիւնը, որ 1000 ոսկւոյ չափ կը կարծուի, կտակած է Երուսաղէմի Վանքին:

—Ս. Պատրիարքի վերջին շրջաբերականին վրայ, Պօլսոյ զանազան թաղերէն նպաստից յանձնաժողովին զրկուած նպաստներուն գումարը հասած է 300 ոսկիի:

—Բերացի գեղազործ լատին պր. Լինարոս Վարդալիտի մեռնելով Աղգ. Տիւնգանոցին կտակած է 100 Օսմ. ոսկի և Ս. Յակոբի Աղգ. Որբանոցին 50 ոսկի:

ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԸ ԵՒ ՅԱՆՔԸ

Սերմնացան մշակ ոչ միայն պէտք է օտար սերմեր ցորենահասէն զստէ, այլ ևս նոյն իսկ վճիտ ևս ցամքած նստիկներ ևս որոշէ կրկին ևս կրկին մտղիւով, յստիկելով այնպէս որ մտառը հասիկներ մեան գեր ևս լիցուն:

ՀԱՅՐԻԿ

Տեսնում ես, իմ սրտես բոռնիկ, որ մեր գիւղական ժողովրդի հողագործութեան վիճակը նոյն հնուրեան իսկնաւորութիւն մեզնի կ, դեռ հիւն հիւն դարերու մեջ կը քայքայուի. մեր հողագործութեան առեւն աշխատութիւններ դառնալիսն սանջան կ, մեր քանկուցած գործիքներ՝ անսաշ, անարուեստ ևս կուպիտ շինուածներ են, որ չեք միայն զմեզ կտակելն, այլ առաւել մեր խեղճ անխօսուն անասուններ:

ՀԱՅՐԻԿ

Ինձ բռնում է որ մեծ պէտք է յարմարեցնենք մեր ուսմանները մեր ներկայ բարեբերի դրութեանը, ևս ուսումնասիրենք այն խնդիրներն, որոնց պահանջ ունի հասարակութիւնը:

ՅԱՆՔԻ

Էտաներ այնպէս են կարծում, որ հողի լաւ կամ վատ արդիւնաւորութիւնը ոչ թէ ցանկելուց և սերմերից կախումն ունի, այլ եղանակից, եթէ Աստուած տայ, եղանակը լաւ լինի.— հունձնառատ կլինի, ընդհակառակը, երբ եղանակը վատ է, որ-

քան կուզեն թող մշակեն երկիրը, լաւ պարարտացնեն, թէ կուզ ամենալաւ տեսակի սերմեր անգամ ցանեն, զարձեալ արդիւնք չի ստացուի: Բայց միթէ ճիշտ է այդպիսիների կարծիքը:

Բանից երևում է, որ լաւ հունձը շատ պատճառներից կախումն ունի, այն է՝ ցանող սերմերի յատկութիւնից, հողը լաւ կամ վատ մշակելուց և պարարտացնելուց, եղանակի լաւութիւնից ևն. սրանցից իւրաքանչիւրն ըստ իւր տեսակի որոշ չափով ունի իւր բարեբար ազդեցութիւնը: Արդէս զի լաւ հունձ ստացուի պէտք է որ այս բոլոր պայմանները միանան առանց բացառութեան: Ապարդիւն կանցնի բոլոր աշխատանքը, եթէ սերմերը լաւ են, բայց հողը վատ է մշակած, և կամ, եթէ սերմերը լաւ են և հողը խնամքով է մշակած, բայց եղանակը անյաջող է, Աւրեմն ինչ պէտք է անէ երկրագործը այնպիսի դէպքում: Նա պարտաւոր է գործ դնել այն բոլոր միջոցները, որ իրենից կախումն ունին, Իսկ մարդուց շատ բան կախումն ունի, նա կարող է լաւ և խելացի կերպով մշակել վարելահողը, ժամանակին և որոշ չափով պարարտացնել, ցանելու համար ընտրել լաւ սերմնացու և յարմար եղանակ ևն, երբ այս բոլորը որքան կարելի է լաւ և յաջող կերպով գլուխ դայ և մարդ խելացի կերպով աշխատի գործ դնել իւր բոլոր միջոցները, այն ժամանակ միայն կարելի է ասել, որ մնացածն այլ ևս մարդուց չէ կախուած: Որքան էլ վատ լինի եղանակը, այնու ամենայնիւ լաւ արտից կարելի է մի բան յուսալ, իսկ եթէ եղանակը ևս լաւ լինի, անկասկած երկիրը գիւղացու ամբողջ աշխատանքը հարիւրապատիկ կը վարձատրէ, և այն ժամանակ միայն ամէն որ կմտարեք անտուտ հին առածը՝ որ դարեւոր փորձառութեան համառօտ ամփոփումն է, «Ինքն իրան օգնողին Աստուած էլ կօգնէ»:

Յանքը գիւղացիների համար մի այնպիսի սովորական բան է դառել, որ կարծում եմ հարցնելն անգամ աւելորդ է, թէ ինչու ցանքի ժամանակ այս և ոչ այլ կերպ են վարում, թէ ինչու գործ են ածում այս և ոչ ուրիշ սերմնացուներ և այլն: Բայց միթէ մեր այժմեան նոյն իսկ ամենախելացի գիւղացին կարող է սովորական գիւղատնտեսական գործերի մասին պարզ և որոշ տեղեկութիւններ հաղորդել. նա կարող է միայն այսօր ասել, որ «Այսպէս են արել մեր պապերը, այսպէս էլ մենք կշարունակենք», նոյն պատասխանը կտար գիւղացին նաև վար ու ցանքի մասին, Մեր նպատակը չէ այստեղ մանրամասնօրէն նկարագրել վար ու ցանքի ամբողջ գործողութեան ընթացքը, այլ կաշխատենք գիւղացու գիտցածից որքան կարելի է աւելի տեղեկութիւններ հաղորդել միմիայն սերմնացու հատիկների և ցանքի մասին:

Նախ քան ցանկը հարկաւոր է սերմնացուներ պատրաստել ցանքի համար:

Ամեն որ պարտաւոր է այսքանն իմանալ որ սկզբներում բոյսն իւր սնունդն ստանում է հատիկի մէջ մթերուած պաշարից: Իսկ երբ կակսի աճել և ամրանալ հողի մէջ, այն ժամանակ միայն փոքրիկ բոյսը կակսի հողից իւր համար սնունդ ձգել: Արքան շատ սնունդ մթերուած լինի հատիկի մէջ, այնքան աւելի շատ արմատ կրանէ բոյսը և նոյնքան էլ ուժեղ և լաւ կերպով կակսի աճիլ: մինչև որ կատարելագոյն հասունանայ, Բացի դրանից ընտիր այսինքն մարուր, խոշոր և ծանր սերմնահատիկները, որոնք ինչպէս վերեն ասացինք, բաւական սնունդ մթերած կունենան, նաև այն յատկութիւնն ունին որ աւելի հեշտութեամբ կարողանում են գիմանալ ցրտերի որովհետև նոցանից յառաջացած ծիւլերը առողջ, զուարթ և զօրեղ լինելով, ընդունակ են կռուելու արտաքին արհաւիրքների դէմ: Եթէ հատիկի մէջ սակաւ է սնունդը, այն ժամանակ բոյսը լաւ հողի մէջն անգամ դժուարութեամբ կակսի աճել: Բացի դրանից, ամեն որ գիտէ որ հէնց նոյն իսկ հատիկի մէջն են զետեղուած ապագայ շտիպահատ բոյսի զանազան յատկութիւնները: Նորա մէջ որոշ շտիպով պէտք է լինին անպատճառ՝ սուլայ, շաքար և հանքային բաղադրութիւններ: որոնք ծլելու ժամանակ սաղմի կերակուրն են կազմում:

Այս բոլոր ստածներից երևում է, որ լաւ սերմնացու հատիկներից շատ բան է կախուած: Բոյց ինչպէս պէտք է ձանաչել լաւ սերմնացուները, ինչպէս պէտք է զանազանել նորա այս կամ այն տեսակը:

Արդէս զի կարողանանք իմանալ, թէ մեր ունեցած հատիկները ո՞ր տեսակին են պատկանում, անհրաժեշտ է ծանօթանալ այն միջոցների հետ, որոնցով կարելի կլինի ձանաչել տեսակների յատկութիւնները: Այդ բանը որոշելը հեշտ չէ: Եսմենայն դեպս հարկաւոր է մեծ զգուշութեամբ գնել հացահատիկներ: Աաճառականները շատ անգամ ամենահասարակ, մինչև անգամ բուսնելու ընդունակութիւնից զուրկ սերմերը տալիս են լաւի տեղ: Այս կամ այն տեսակ սերմնացուներ ձեռք բերելու համար աւելի լաւ է գիմել մի որ և է լաւ և յայտնի գիւղատնտեսական հաստատութեան ինչպէս օրինակ մեղանում Աովկասեան գիւղատնտեսական ընկերութեան: Աերջին ժամանակներս շատ տեղերում, մանաւանդ Բոլճաստանում, մի քանի գաւառական վարչութիւններ յանձն առան վաճառել լաւ սերմնացուներ:

Անպիճելի է, որ լաւ տեսակի սերմերն առանց մի որ և է հոգացողութեան կարող են լաւ բերք տալ, Գծաբխութիւնը միայն նրանումն է, որ լաւ

սերմ ձեռք բերելը այնքան էլ հեշտ բան չէ, ինչպէս կարծում են: Սերմի առևարի մէջ կարող են մէկ տեսակը միւսի տեղ վաճառել, երբեմն նոյն իսկ լաւ տեսակի սերմերն անգամ կարող են չյարմարուիլ այս կամ այն տեղի կլիմային: Այս բանն աւելի յաճախ կարող է պատահել այն տեսակ սերմնացուների հետ, որոնք բերում են հեռաւոր տեղերից: Այսպէս, օրինակ պատահում է, որ վարսակի մի քանի տեսակները շատ ուշ են հասնում և այդպիսով ուշացնում հացբոյսեր հաւարելու ժամանակը: Երբեմն կարող է պատահել որ եղանակի վատութեան և կամ ուշացանելու պատճառով չհասնի երբեմն էլ, ընդհակառակը, այնպէս է լինում, որ նոր բերուած սերմերի առաջին հունձը բաւական յաջող է լինում: Իսկ երկրորդ տարում համարեա և ոչ մի տարբերութիւն. այդ նշանակում է, որ լաւ հողից վեր առնուած սերմերը վատ հողի մէջ իսկոյն այլասերում են: Այս պատճառով էլ լաւ տեսակի սերմնահատիկները բաւականին թանկ են լինում, ուստի և ամէն մի գիւղացի չէ կարող ձեռք բերել:

Ամենայն գիւղացի պարտաւոր է աշխատել իւր տանը ձեռք բերելու լաւ սերմեր: Պան շատ հասարակ միջոցներ սեփական մանր, թեթեւ և սակաւարեք հատիկները դարձնելու խոշոր, ծանրակշիռ և պողարեք հատիկներ: Այս բանը ի հարկէ միանգամից չի կարելի գլուխ բերել և սովորաբար այս կերպ բարելաւած հացահատիկները հիանալի կերպով յարմարում են տեղական կլիմային և հողին:

Աստիճանաբար լաւ սերմացու ստանալու համար պէտք է հացահատիկները լաւ մաքրել և ջնկջնկել միմեանցից: Գիւղացոց գործ դրած սովորական սերմնացուները խիստ աղբոտ են լինում: Գծուար է ասել, թէ այդ բանը անպատճառ մարբելու եղանակը չիմանալուց է յառաջացել: Ընդհակառակը, աւելի շատ այդ բոլորը արդիւնք է այն անհասկացողութեան և անտարբերութեան, որ ունին գիւղացիները դէպի աղբոտ և անմաքուր սերմնացուները: Սերմնացու հատիկների հետ խառն են լինում՝ յարդ, զանազան հանքերի մնացորդներ փայտի մանր կտորներ և ուրիշ հացբոյսերի ու զանազան ինքնարոյս խոտերի սերմեր, որոնք կը բուսնեն առանց ցանելու և մշակելու և այլն: Չպէտքէ թողնել զանազան հանքերի կտորներ և այլ այսպիսի բաներ սերմնացուների մէջ, թէև նորա այնքան վնասակար չեն, ինչպէս ամեն տեսակ բոյսերի սերմերը: Այդ օտար սերմերը հացահատիկների հետ միասին ցանում են և յառաջ բերում դաշտում անպէտք խոտեր՝ երբեմն այնքան մեծ քանակութեամբ, որ խեղդում են հացբոյսերը: Այսպիսի դէպքեր յաճախ տեղի են ունենում, անշուրջք և իւրեանց

գործին անուշագիր գիւղացիների պատճառով: Արքան էլ սակաւ լինին այսպիսի անպէտք խոտերը՝ այնու ամենայնիւ նոցանից իւրաքանչիւրը խլում է հացարոյսերից մի որոշ տեղ և արգելում է նորան ազատ կերպով աճել: որովհետեւ ինչպէս հացարոյսերին այնպէս և բոլոր միւս բոյսերին հարկաւոր է խոնաւութիւն և սնունդ: Գիւղացոց ուժասպառ եղած վարելահողերի մէջ գտնուած սնունդը հացարոյսերին անգամ չի բաւէ: ուր մնաց օտար և անպէտք բոյսերին: Անպէտք խոտեր կարող են յառաջ գալ նաև վատ աղբից և ակօսակներն ու միջակները չքանդելուց: բայց ամենից շատ ի հարկէ հացարոյսերի սերմերի մէջ եղած աղբից: Գիւղացիներից շատերը բոլորովին չեն հաւատում այդ բանին: Նոքա ասում են՝ որ դաշտում խոտերի սերմերն անյայտ կերպով են յառաջ գալիս՝ «սարկեր» է այդ: Արպէս թէ հացարոյսերի սերմերը ամեն տարի նոյնն են լինում: իսկ օտար խոտեր դաշտերում մի տարի շատ է աճում: միւս տարի ընդհակառակը, շատ քիչ: Բացի դրանից մի տարի չորային լինելու պատճառով երևան է գալիս մի այլ բոյս՝ իսկ միւս տարի խոնաւութեան պատճառով մը ուրիշը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ գիւղացոց համար աղբոտ սերմացուն այսպիսի հանգամանքներում ոչ մի վնասակար գեր չի կարող խաղալ: Բայց սխալ է այդ: Այս բանը կարելի է բացատրել շատ պարզ կերպով: Չանազան տեսակի անպէտք խոտեր սիրում են զանազան եղանակներ, նոցանից մի քանիսը արագ կերպով աճում են, երբ ամառը խոնաւ է լինում: միւսները կարող են յառաջ գալ նաև ամառուայ չոր եղանակին: Այդ վնասակար խոտերի սերմերը հացարոյսերի սերմերի հետ միասին ընկնելով հողի մէջ, կարող է պատահել, որ առանց բուսնելու, երկար ժամանակ պասկած մընան, երբեմն էլ կարող են ամբողջ տարիներով անվնաս մնալ իւրեանց որրանում: իսկ յետոյ, յանկարծ, մի օր յարմար եղանակին բոլորը միասին միանգամից գլուխ կբարձրացնեն և գուրս կգան:

Այս բոլորից արդէն կարելի է եզրակացնել, որ հացարոյսերի սերմերի մէջ եղած վնասակար բոյսերի սերմերը միշտ նուազեցնում են բերքը, և միշտ ստիպուած այդպիսի աղբոտ սերմերը սփորակներից խիտ են ցանում:

(Կը շարունակուի)

Գ. Դ.



ՔՆՆՈՒԹԻՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ

(Շարունակութիւն) *

Գ. Բառի սկիզբը.

Ե ըստերու սկիզբը կը կրէ հետեւեալ ձայնափոխութիւնները.

1. Նախ կը վերածուի յի (յօ) վանկին. այս մասին եղած ամբողջական օրինակներն են՝ յիզըր՝ եզն. յիսիկ կամ յիսիցի՝ եկեղեցի. յերիսկօրօս՝ եպիսկոպոս. յիս՝ ես. յերեց կամ յրեկ՝ երէկ. յերգիմից՝ երկինք. յերգիր՝ երկիր:

Ե-ի այս ձևափոխութիւնը՝ որ նոյն է մեր արդի երկու գրական բարբառներուն նախատառ ե-ի արտասանութեան հետ, ծագած պիտի լինի հետեւեալ եղանակով:

Մի քանի հայ բարբառներու մէջ (այսպէս Մուշի Ալաշկերտի Մուշալայի) բառամէջի շեշտեալ կամ նաև անշեշտ ե-ը ստացած է երկբարբառային իկ հնչումը: Տարախոյս չկայ որ Ղարաբաղի բարբառին ինչպէս նաև մեր երկու գրական լեզուներուն ծնունդ տուող մայր բարբառներուն մէջ՝ նախաձայն ե-ը ի սկզբան ունէր այս երկբարբառային իկ արտասանութիւնը՝ որ հենց սկզբնաձայն լինելուն համար հեաղհեաէ թանձրանալով վերածուած է յի միափոխին:

Ե-ի այս փոփոխութեան հետ ուղիղ համեմատական է զբարբառի նախատառ ո ձայնին ձևափոխութիւնը, որ արդի երկու գրական լեզուներուն մէջ վերածուած է Վօ, իսկ Ղարաբաղի բարբառին մէջ՝ ինչպէս յետոյ պիտի տեսնենք: Վրկ հնչման: Մի քանի հայ բարբառներու մէջ (այսպէս Մուշի Ալաշկերտի) նաև Սեբաստիոյ Եւդոկիոյ ևլի) ինչպէս որ բառամէջի շեշտեալ կամ նաև անշեշտ ե-ը ստացած է երկբարբառային իկ հնչումը: նոյնպէս նաև նոյն դիպքով ո ձայնը վերածուած է երկբարբառային ուօ կամ ուկ հնչման: Ե ձայնին պէս նախատառ ո-ն ալ Ղարաբաղի բարբառին նախնական վիճակին մէջ ուէ: իսկ մեր գրականները ծնող մայր բարբառին մէջ ուօ հնչումն ունեցած բլալու էր. սրանց հեաղհեաէ թանձրանալով յետոյ ծընունդ տուին վրկ և Վօ ձևերուն:

Ե—յի ձայնափոխութեան ընթացքը որոշելով կը պարզուի նաև Ղարաբաղի բարբառին ա—յի ձայնաշրջութեան: որու վրայ խօսած ենք ար-

* Տես «Արարատ» 1900 թ. համար Ա. եր. 25: